ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՈՒՆ N 3

«ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-07-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Արմավիր 16.04.2019թ.
Ժամը 10^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Աղաջանյան
Անդամներ՝ Ս. Հովհաննիսյան, Տ. Ավետիսյան,
Մրցույթի համակարգող՝ Ա. Թաշչյան:

1. **Հայտերի գնահատման մասին**

1.1 Հանձնաժողովը արձանագրեց, որ «ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-07-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում Կոմիտեի տրամադրած տեղեկատվությամբ Արտավազդ Պետրոսյան ՍՊԸ-ի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը չի համապատասխանում սահմանված պահանջներին: Հանձնաժողովը որոշեց Արտավազդ Պետրոսյան ՍՊԸ-ի հայտը մերժել:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ՝ 0

2. **Հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջին տեղ զբաղեցրած ճանաչելու մասին**

2.1 Հանձնաժողովը արձանագրեց, որ «ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-07-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով երկրորդ տեղ է զբաղեցրել Հովհաննես Ամիրյան Ա/Ձ-ն: Հանձնաժողովը որոշեց Հովհաննես Ամիրյան Ա/Ձ-ին 1-ին չափաբաժնով ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից և մասնակցին ծանուցել առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել «ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-07-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետի 3.1 ենթակետով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ՝ 0

3. **Կոմիտեի կողմից տրամադրվող տեղեկատվության մասին**

3.1 Հանձնաժողովի քարտուղարը էլ. փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում «ԱՔՄ-ԳՀԱՊՁԲ-07-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան:

4. **Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը ժամը և վայրը որոշելու մասին**

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) և մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրը 16:00-ին, քաղաք Արմավիր, Հանրապետության 32 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի
Նախագահ _____ Գ. Աղաջանյան
Անդամներ՝ _____ Ս. Հովհաննիսյան
_____ Տ. Ավետիսյան
Մրցույթի
համակարգող _____ Ա. Թաշչյան